

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ի ՍՈՒՐԲ ԻՍԶՆ

ՏԱՂ ԽՈՍՐՈՎԱՅԻՆ*

Միակն ի միոյն յանըսկիզբն էէն անեղ,
 Ծընեալ նոյնաբար անժամանակ որդիին,
 Որդին անեղին եղելոցս էակ ընդ Հօր
 Հոգւով ներգործեալ զարարածոց գոյակս,
 Գոյակ նախեղակ իննակի դասուց աննիւթ
 Հոգւոց հրեղինաց երրորդութեանն հուպ,
 Հուպ իւր տիրական պատկերաւ պատուեալ ըզմարդն՝
 Եղեալ տընկագործ անմահական գրախտին,
 Գրախտին ադենայ ծառ կենաց 'ի մէջ նորին,
 Գիմակ մահառիթ մի ճաշակել պատուէր,
 Զպատուիրան լուսոյ խաւարին խաբմամբ թողեալ,
 Մերկացաւ ըզլոյսն անըստուերական փառացն,
 Փառաց թագաւորն 'ի խընդիր ելեալ իւրոյ
 Ստեղծեալ պատկերին՝ ըզնոյն առեալ բնութիւն.
 Բնութիւն միացեալ կուսական ծնընդեամբ Բանին
 Ընդ հողեղինիս անյեղապէս գոլով,
 Գոլով յաշխարհի հրաշալի ծագմամբ լուսոյն
 Եկեալ կամաւ Հօր 'ի կատարումն գրոց,
 Զգիրս մարգարէիցն նախաձայն բարբառ լրցեալ,
 Ի խաչ բարձրանալ երկնակառոյց ձեռինն,
 Զեռինն Ադամայ փոխանակ ձրզմանն 'ի ծառըն՝
 Տարածեալ 'ի սմա զիւր զանարատ բազուկան,
 Բազուկ կարութեան Հօր ալոյ ձեռինն, մարմնով
 կամաւ բեռեալ 'ի կենսունակ փայտին,
 Փայտըն կենարար քառանգիւն կանգնեալ յերկրի
 Քառակողմ ազանց անմահ արկեալ սեղան,
 Սեղան Աբրամին Սահակայ տրւեալ փոխան խոյի
 Յողակէզ ընդ բանաւոր զենմանն,

* Հոգեւորութեան և քերթողութեան մէջ իբրեւ ճարտար և ազգու ձեւ մը կը նշ-
 կատուի Բազմիստորիան (յն. Συμπλοκή, լատ. Complexio). յորում առաջին պար-
 բերութեան կամ առդին վերջին բառն կրկնուելով՝ կը գրուի 'ի սկիզբն յաջորդ առ-
 ղին կամ պարբերութեան. որոյ գեղեցիկ օրինակ մը կրնայ տրուիլ ազգային մասե-
 նագրութենէն՝ Ենորհալոյն գեղեցիկահիւս տաղն ի ստորոյ քառաստույնս. և սոյն ա-
 ռաջիկայ տաղս ի Սուրբ Խալն, որ նոյն սուրբ Հայրապետին կ'ընծայուի:

Ձենեալ 'ի վերայ քառաթև խաչին՝ անմահ
Գառն Աստուծոյ բարձող մեղաց մարդկան ,
Ձմարդկայինն առ Հայր աւանդեալ զհոգին ,
Որով աղաղակելով ելի ելի գոչէր :
Գոչմամբ զարհուրեալ սանդարամետիցն հոյլք
Սարսեալ սաքրէին յանդրնդասող խաւարն ,
Խաւար լուսածին միջօրեայ եհաս ժամու
Որով լուծանէր զխաւար մեղաց մահուամբ ,
Մահուամբ անմահին՝ մահուն միռանէր պատճառ ,
Եւ 'ի մեռելոց յառնէր բնութիւնս անդեալ :
Անգեալ նախահայրն մահաբեր ծառոյն հրպմամբ ,
Կանգնէր կենարմատ փայտին մերձեալ 'ի նմա :
Նման նոյնակի 'ի յօձին հարեալ թունից
Լուանայր կողածինն տիգախոց կողին :
Կողին գուգնաքեայ շիթք արեան հոսեալ , շնորհեաց
Յաւէժ միշտ երգել երրորդութեանն փառս :

ԲՄԱՌՅԱԿԱՆ ԻՄԱՍՏՔ

Յոյսն ընդհանուր մարդկութեան միակ բարին է . նոքա որ ոչինչ ունին՝
անով ունին տակաւին բան մը :
Խօսից առատութիւնն ոչ է նշանակ մեծագամձ իմաստութեան :
Մարմնոյ երջանկութիւնն կը կայանայ յառողջութեան , իսկ հոգւոյն՝
'ի գիտութեան :
Մարմնոյ արտաքնայարգար պաճուճանք չին կազմեր զճշմարիտն գեղեց-
կութիւն , այլ հոգւոյն իմաստութեամբք ճոխանայն :
Կարգաւորեալ Պետութիւն այն է՝ յորում ոչ չափազանց հարուստ և ոչ
բոլորովին աղքատ քաղաքիք կան :
Անիրաւ միջոցներով ստացուած մի գիզեր :
Սեփական թերութիւններն ուղղելու ապահով կերպն է զգուշանալ այն
բանէն , որուն համար զայս կը յանդիմանի մը :
Իմաստասիրի մը հարգուցին թէ աշխարհիս մէջ ամենադժուարին , ամենա-
դիւրին և ամենաքաղցր իրերն ոյք են . Առաջինն , ըսաւ , ինքզինքը ճանչել ,
երկրորդ՝ խրատել զայս , և երրորդ՝ իւր փափաքելին ընդունել :
Հարկ է լուծեամբ կնքել խօսքերը , և գլուխինը՝ ժամանակաւ :
Մի տար բարեկամացք աւելի հաճոյագոյն խորհուրդները , այլ աւելի օգ-
տակարները :
Մեծամեծ ձեռնարկներու մէջ անհնար է ամենուն ալ հաճոյ լինել ,
Թողումք այլոց հարստութիւնքը , և մեք շատանանք առաքինութեամբ :